

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

ԱՆՁԻ ՊԱՏԻՎԸ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՏԱՎՈՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԻՆՉՊԵՍ
ՆԱԵՎ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ
ԹՇՆԱՄԱՆՔ ՀՐԱՀՐԵԼՈՒՆ ԿԱՄ ՔԱՐՈՁԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔԻ
ԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ
իրականացվող՝ «Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և
կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ ՊԱՏԻՎԸ ԿԱՍ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱՏԱՎՈՐԵԼՈՒ ԴԵՊԶՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ	4
1.1. Վիրավորանքի և զրպարտության օրենսդրական սահմանումները	5
1.2. Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից ազատվելը	8
1.3. Ապացուցման բեռը	9
1.4. Վիրավորանքի դեպքում դատական կարգով պահանջվող իրավական պաշտպանության միջոցները	9
1.5. Զրպարտության դեպքում դատական կարգով պահանջվող իրավական պաշտպանության միջոցները	10
1.6. Հայցադիմումը և դրան ներկայացվող պահանջները	14
1.7. Հայցադիմումի դիմաց գանձվող պետական տուրքը	16
1.8. Դատարանի կողմից կայացվող դատական ակտերը	16
ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ ԹՇՆԱՍՄԱՆՔ ՀՐԱՀՐԵԼՈՒՆ ԿԱՍ ՔԱՐՈՁԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿԱՑՄԱՆ ԽՈՍՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՂ ԼՊԱՏԱԿՈՎ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՍ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ	18
1.1. Ֆիզիկական անձի անմիջական և փոստային հաղորդումը	22
1.2. Քննիչի կողմից քրեական վարույթ չնախաձեռնելը	24
1.3. Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման դատական բողոքարկումը	25

Եթե հանդիսանում եք Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձ, ով, իր ծագումով պայմանավորված, բախվել է ատելության խոսքի, պատիվը կամ արժանապատվությունը արատավորող հրապարակային արտահայտությունների, ապա կարող եք օգտվել ինչպես քաղաքացիաիրավական, այնպես էլ քրեաիրավական պաշտպանության ներքոգրյալ մեխանիզմներից:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների խախտումների կանխման խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում՝ խախտված իրավունքների վերականգնման ապահովման խնդիր:

Ուստի՝ քաղաքացիական և քրեական օրենսդրությունները հետապնդում են տարբեր նպատակներ, և դրանց իրացման համար նախատեսված են տարբեր ընթացակարգեր: Նույն տրամաբանությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածն իր նպատակով տարբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի հետապնդած նպատակից, մասնավորապես, եթե առաջին դեպքում օրենսդիրը նպատակ է հետապնդում մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնման իրավական հնարավորությունը և ստանալ ոչ նյութական վնասի հատուցում, ապա երկրորդ դեպքում օրենսդրի խնդիրն է կանխել իրավունքների հնարավոր ցանկացած խախտում, իսկ խախտման դեպքում պաշտպանել դրանք հանրային շահը:



Հետևաբար՝ նշված խնդրի առնչությամբ հարուցված քրեական վարույթն ինքնին չի բացառում քաղաքացիական դատավարության շրջանակներում անձի կողմից իր պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման ընթացակարգերի նախաձեռնման հնարավորությունը:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՆՁԻ ՊԱՏԻՎԸ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱՏԱՎՈՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը սահմանում է պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

Մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական և լիարժեք պաշտպանության երաշխավորումը հանրային իշխանության սահմանադրաիրավական պարտքն է, ուստի՝ վերջինս պետք է երաշխավորի, ի թիվս այլնի, նաև արդարադատության իրականացման բացառիկ առաքելություն ունեցող դատական համակարգի միջոցով՝ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների կենսագործման համար անհրաժեշտ մեխանիզմներ: Այս համատեքստում արձանագրում ենք, որ *օրենսդիրը, ի միտն ունենալով մարդու արժանապատվության, պատվի և բարի համբավի անձեռնմխելիության դատական կարգով պաշտպանության առանցքային նշանակությունը, ի թիվս այլնի, նաև քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսել է սույն սահմանադրաիրավական արժեքների երաշխավորմանը միտված կարգավորումներ:*

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են դատական պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և

գրպարտությունից՝ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Հիշատակված կարգավորմանը համահունչ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ:

1.1. **Վիրավորանքի և գրպարտության օրենսդրական սահմանումները**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը սահմանում է վիրավորանքի և գրպարտության օրենսդրական սահմանումները, համաձայն որոնց.

- **վիրավորանքը** խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մաս),

- **գրպարտությունն** անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 3-րդ մաս):

Մահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-997 որոշման համաձայն՝ այստեղ կարևոր է նաև «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոտնձգություն անձի արժանապատվության նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ *հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը* կարող է դրսևորվել սպագորության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ **թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով** (*տե՛ս Վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշումը*): Մահմանադրական դատարանը, իր հերթին, վերոնշյալ որոշմամբ նշել է, որ յուրաքանչյուր գործով արարքի հրապարակայնության փաստի, հանգամանքների պարզումն իրավակիրառական պրակտիկայի խնդիր է:

Այսպիսով՝ պատիվը կամ արժանապատվությունը արատավորող հրապարակային արտահայտությունների դեպքում անձն ունի իրավական պաշտպանության երկու միջոց.

✓ եթե պատիվը կամ արժանապատվությունը արատավորող հրապարակային արտահայտություններն արվել են **խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով**, ապա անձը կարող է օգտվել վիրավորանքի

համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից,

✓ եթե անձի վերաբերյալ հրապարակային ներկայացվել են **այնպիսի փաստացի տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը** և հանդիսանում են վերջինիս պատիվը կամ արժանապատվությունն արատավորող, ապա անձը կարող է օգտվել զրպարտության համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից:

Հարկ է նկատել, որ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե

(1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում (օրինակ՝ վարույթի մասնակիցը Ձեզ անվանել է դասալիք և փորձել փաստարկել իր կողմից արված արտահայտությունը),

(2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները,

(3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից (օրինակ՝ Դուք հրապարակային ելույթի ժամանակ ակնարկել կամ ուղիղ հայտարարել եք, որ պատերազմական գործողությունների ժամանակ լքել եք

գորամասը և հեռացել Լեռնային Ղարաբաղից, ինչն այլ անձի կողմից որակվել և հրապարակային ներկայացվել է որպես դասալքություն):

1.2. Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից ազատվելը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի հրապարակման, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նույն հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան՝ սույն մասով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից և կրում է փոխհատուցման պարտավորություն, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները «Զանգվածային լրատվության մասին» օրենքով սահմանված չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն են՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:

1.3. Ապացուցման բեռը

Ջրաբարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության *ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը*: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

1.4. Վիրավորանքի դեպքում դատական կարգով պահանջվող իրավական պաշտպանության միջոցները

Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

(1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

(2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

(3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի (երեք միլիոն դրամ) չափով փոխհատուցում վճարել:

1.5. Չրպարտության դեպքում դատական կարգով պահանջվող իրավական պաշտպանության միջոցները

Չրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

(1) Եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով¹.

(2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի (վեց միլիոն դրամ) չափով փոխհատուցում վճարել:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության

¹ Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-1752 որոշմամբ արձանագրել է, որ պետք է գործեն անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն անձի նկատմամբ իրակա-նությանը չհամապատասխանող և նրա պատիվը, արժանապատ-վությունը կամ գործարար համբավն արատավորող զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների (statement of fact) ներկայացման պայմաններում (անկախ դրանք ներկայացրած սուբյեկտի) դրանք հրապարակայնորեն հերքելու և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանը հրապարակելու և (կամ) դրանք հեռացնելուն պարտա-վորեցնելու հնարավորությունը, քանզի նման հնարավորության բացա-կայությունը հակասում է Սահմանադրության 31 և 75-րդ հոդվածներին:

աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

Այսպիսով՝ օրենսդիրը վիրավորանքի կամ զրպարտության միջոցով անձի պատիվը կամ արժանապատվությունը արատավորող հրապարակային արտահայտությունների դեպքում անձին հնարավորություն է տվել առաջին ատյանի դատարան հայց ներկայացնելու միջոցով պաշտպանել իր պատիվը կամ արժանապատվությունը:

Ուշադրություն՝ Դուք չեք կարող օգտվել վերոնշյալ հրավական պաշտպանության միջոցներից, եթե մինչև դատարան դիմելը «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել եք հերքում և (կամ) Ձեր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն հրականացնողը կատարել է այդ պահանջը:

1.6. Հայցադիմումը և դրան ներկայացվող պահանջները

Քաղաքացիական դատավարության շրջանակներում քաղաքացիական գործի հարուցման մեկնարկն իրականացվում է հայցադիմումի ներկայացմամբ: Հայցադիմումը ներկայացվում է գրավոր, ընդ որում՝ դատավարական բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ Օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նան՝ Օրենսգիրք) 121-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հայցադիմումին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ հայցադիմումում պարտադիր նշվում են.

(1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը,

(2) հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն

տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ), հայցվոր իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը,

(3) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն,

(4) գործին մասնակցող այլ անձանց անունը (անվանումը), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն,

(5) այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները,

(6) դրամական պահանջի դեպքում՝ պահանջվող կամ վիճարկվող գումարի չափը և հաշվարկը,

(7) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (պահանջները), իսկ մի քանի պատասխանողների դեմ հայցադիմում ներկայացնելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջը (պահանջները), եթե այն համիրավ չէ,

(8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:

Հայցադիմումում կարող են նշվել՝

(1) վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.

(2) այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված.

(3) հայցվորի միջնորդությունները.

(4) այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար.

(5) էլեկտրոնային հաղորդակցության միջոցի վերաբերյալ տեղեկությունը՝ ծանուցումն այդ միջոցով իրականացնելու միջնորդությամբ.

(7) հայցվորի կամ հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը:

Օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումին կցվում են.

(1) հայցվորի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

(2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը.

(3) լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը, եթե հայցվորը հանդես է գալու ներկայացուցչի միջոցով, և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

(4) հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցներ².

(6) հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ գործին մասնակցող անձանց թվին համապատասխան³.

(7) հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառած դատարան ուղարկելը հավաստող ապացույցներ:

Հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

² Հայցադիմումին չեն կցվում հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցներ, եթե՝

1) հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն.

2) հայցվորը ներկայացրել է ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդություն:

³ Հայցադիմումին չեն կցվում հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցներ, եթե՝

1) հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն.

2) հայցվորը ներկայացրել է ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդություն:

1.7. Հայցադիմումի դիմաց գանձվող պետական տուրքը

Եթե հայցվորը, ոչ նյութական պահանջից գատ, ներկայացնում է նաև նյութական պահանջ, ապա դրամական պահանջներով պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա: Ընդ որում՝ դրամական և ոչ դրամական պահանջներ պարունակող հայցադիմումով պետական տուրքը հաշվարկվում և գանձվում է *յուրաքանչյուր պահանջի համար առանձին*:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

(1) դրամական պահանջով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից (ոչ պակաս 6000 ՀՀ դրամից և ոչ ավել 250.000 ՀՀ դրամից),

(2) ոչ դրամական պահանջով՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով (20.000 ՀՀ դրամ):

Բազային տուրքը կազմում է 1000 ՀՀ դրամ:

1.8. Դատարանի կողմից կայացվող դատական ակտերը

Գործն ըստ էության լուծելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է վճիռ: Զրպարտության կամ վիրավորանքի դեպքում ՀՀ քաղաքացիական

օրենսգրքով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

(1) վիրավորանքի կամ գրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

(2) վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունը:

Ընդ որում՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը:

Վերոգրյալի առնչությամբ հարկ է նշել, որ վիրավորանքի կամ գրպարտության համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցների հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ գրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասները, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԹՇՆԱՄԱՆՔ ՀՐԱՀՐԵԼՈՒՆ ԿԱՄ ՔԱՐՈՁԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿԱՑՈՒՄ ԽՈՍՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՐ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սահմանադրության՝ «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելքի սահմանադրաիրավական պահանջն իր ամրագրում է գտել նաև գործող ՀՀ քրեական օրենսգրքում, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խտրականությունը՝ տարբերակված վերաբերմունքի դրսևորումը, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը

պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Խտրականության արգելքը քրեականացնելով՝ օրենսդիրը հետապնդել է անձանց իրավահարաբերությունն ապահովելու սահմանադրաչափ նպատակը: Այս հանցագործության անմիջական օբյեկտը բոլոր մարդկանց պատվի, արժանապատվության, ինչպես նաև իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործությունն օբյեկտիվ կողմը, որպես կանոն, դրսևորվում է գործողությամբ (օրինակ՝ աշխատանքի

ընդունման մերժում՝ պայմանավորված անձի՝ ԼԴ-ից բռնի տեղահանված անձ հանդիսանալու հանգամանքով), սակայն հնարավոր են դեպքեր, երբ անգործությունը նույնպես հանգեցնի հանցանքի կատարմանը (օրինակ՝ բժշկական անհրաժեշտ օգնություն չցուցաբերելը՝ պայմանավորված անձի՝ ԼԴ-ից բռնի տեղահանված անձ հանդիսանալու հանգամանքով):

Հարկ է նկատի ունենալ, որ քրեորեն պատժելի է համարվում ոչ միայն անձանց իրավունքների կամ ազատությունների ոտնահարումը, այլև անձանց առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի առավելություններ տրամադրելը (օրինակ՝ եթե Ձեզ, ծագումով պայմանավորված, մերժում են խրախուսելուց, սակայն առանց որևիցե օբյեկտիվ հիմքի խրախուսում են մեկ այլ աշխատակցի):

Հանցագործությունն ավարտված է համարվում մարդու իրավունքները կամ ազատությունները, ինչպես նաև պատվը կամ արժանապատվությունը ոտնահարող կամ նրան որևէ առավելություն տվող տարբերակված վերաբերմունք դրսևորելու պահից՝ անկախ որևէ հետևանքի առաջացումից:

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ անձի կամ անձանց խմբի նկատմամբ **ռասայական, ազգային կամ էթնիկ** բնույթով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը կարող են որակվել որպես ՀՀ քրեական

օրենսգրքի 329-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն և կարող են հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության⁴:

ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ

⁴ Տե՛ս, օրինակ, թիվ ԵԴ/1040/01/22 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 18.12.2023թ. դատավճիռը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Միխայիլի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ազգային արժանապատվությունը հրապարակայնորեն նվաստացնելուն ուղղված գործողություններ է կատարել: Անտեսելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներից մեկը, «Հայելի» հաղորդաշարի եթերում անպարկեշտ ձևով նսեմացրել է Շիրակի և Արարատյան դաշտավայրերի ազգաբնակչությանը: 2022 թվականի մայիսի 8-ին Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում տեղի ունեցած հարցազրույցի ընթացքում՝ այդ կերպ իր դիտավորյալ գործողություններով, ընդհանրական բնույթ կրող և ազգաբնակչության լայն շրջանակին վերաբերելի հիշյալ ձևակերպումներով հրապարակայնորեն նվաստավնելով նշված դաշտավայրերի բնակչության ազգային արժանապատվությունը, մտացածին գաղափարներով և հայացքներով ատելություն և թշնամանք է սերմանել հայ ազգի շրջանում:

ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նշյալ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ (1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, (2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ (3) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ պատժվում է ազատագրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

1.1. Ֆիզիկական անձի անմիջական և փոստային հաղորդումը

Ֆիզիկական անձինք առերևույթ հանցանքի մասին կարող են հայտնել՝ (1) անմիջական հաղորդմամբ կամ (2) փոստային հաղորդմամբ:

(1) Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 174-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առերևույթ հանցանքի մասին ֆիզիկական անձի անմիջական հաղորդումն ընդունում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ համապատասխան իրավասություն ունեցող պետական այլ մարմնի իրավասու ծառայողը՝ քննիչին փոխանցելու նպատակով, կամ անմիջականորեն քննիչը:

Նշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **ֆիզիկական անձի անմիջական հաղորդումը շարադրվում է գրավոր՝ առաջին դեմքով:** Հաղորդումը պետք է պարունակի այն

ներկայացրած անձի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան թիվը, բնակության հասցեն, ստորագրությունը, ինչպես նաև բացահայտի ֆիզիկական անձի առնչությունը հանցանքին և նրա իրազեկության աղբյուրը: Հաղորդմանը կարող են կցվել համապատասխան փաստը հաստատող նյութեր:

Իսկ նշյալ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ լրացել է հաղորդում ներկայացրած անձի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին, որը հաստատում է իր ստորագրությամբ: Այսպիսի նախազգուշացում ստորագրությամբ արվում է նաև այն դեպքում, երբ ֆիզիկական անձը ներկայացրել է նախապես շարադրված գրավոր հաղորդում:

(2) Օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առերևույթ հանցանքի մասին ֆիզիկական անձի փոստային հաղորդումը պետք է ունենա նամակի, էլեկտրոնային նամակի կամ հաղորդումների այլ ընդունված ձև: Ֆիզիկական անձի փոստային հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար բավարար տվյալներ, ինչպես նաև բացահայտի ֆիզիկական անձի առնչությունը հանցանքին և նրա իրազեկության աղբյուրը:

Նշյալ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի փոստային հաղորդմանը կարող են կցվել համապատասխան փաստը հաստատող նյութեր:

Իսկ նշյալ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **եթե ֆիզիկական անձի փոստային հաղորդումը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին, ապա քննիչն իրավասու է քրեական վարույթ չնախաձեռնելու, որի մասին հաղորդումը ներկայացրածը գրավոր տեղեկացվում է:** Այդպիսի

հաղորդումը դատախազի կամ քննիչի նախաձեռնությամբ կարող է ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով:

Ֆիզիկական անձի կողմից առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու դեպքում⁵ քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել:

Օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն *անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն*, իսկ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

1.2. Քննիչի կողմից քրեական վարույթ չնախաձեռնելը

Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հաղորդումը չի համապատասխանում Օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, որի վերաբերյալ հաղորդումն ստանալու պահից 24

⁵ Օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Ժամվա ընթացքում գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը:

Նշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, հսկող դատախազը հաստատում է այն կամ հանձնարարում է քննիչին նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթ չնախաձեռնելու և դրա օրինականությունը հսկող դատախազի կողմից հաստատելու մասին քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է հաղորդումը ներկայացրած անձին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը, ինչպես նաև պարզաբանելով քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը բողոքարկելու կարգը և ժամկետները:

1.3. Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման դատական բողոքարկումը

Օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով այն մինչդատական ակտերի սպառիչ ցանկը, որոնք ենթակա են դատական բողոքարկման, դրանց շարքին է դասում նաև քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումը:

Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման վերաբերյալ բողոքը պարունակում է՝

- 1) իրավասու դատարանի անվանումը.
- 2) բողոքարկողի անունը, հայրանունը, ազգանունը, ունենալու դեպքում՝ կարգավիճակը.
- 3) բողոքը դատարան ներկայացնելու տարին, ամիսը, օրը.



4) բողոքարկվող վարութային ակտը.

5) բողոքարկվող վարութային ակտի դատախազական բողոքարկման ընթացքը և արդյունքը.

6) բողոքի փաստարկները և պահանջը.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը:

Բողոքին կցվում է բողոքի պատճենը բողոքարկվող ակտը կայացրած (կատարած)՝ վարույթի հանրային մասնակցին ուղարկած լինելը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):

Օրենսգրքի 304-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման վիճարկման վարույթի արդյունքով դատարանը որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակի բավարարում է բողոքը կամ մերժում է այն: Ամեն դեպքում, բողոքը բավարարվում է, եթե վարույթի հանրային մասնակիցը չի ներկայացրել դատարանի պահանջած նյութերը: Բողոքը կարող է բավարարվել, եթե վարույթի հանրային մասնակիցը դատարանի պահանջով չի ներկայացել դատարան:

Բողոքը բավարարելու դեպքում դատարանը վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ, սույն պարագայում՝ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պարտականություն: